

ՏԱԿՐՈՍ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Կը Հրատարակուի Շաբաթը մի Անգամ

ԲԱԺԱՆՈՒԴԱԳԻՆ

Պուրկարիոյ համար տարեկան	10 ֆր.
» » վեցամսեայ	5 »
» » եռամսեայ	4 »
Արտատահմանի համար տարեկ.	12 »
» » վեցամսեայ	6 »
ՎՃԱՐՄՈՒՆՔ ԿԱՆԻՅԻ	

Նամակ, ծրար եւ այլ փոխ Ե ղրկել հետեւեալ հասցեով

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԱՐԲԱՆ

Տէր և Խմբագիր Տարա շաբաթներով

Х. Чакрянъ
Редакторъ на вѣстникъ
„ДАВРОСЪ“
Варна България
Отговорникъ Н. Драгулевъ

H. TCHAKERIAN
Rédacteur du Journal
DAVROS
Varna (Bulgarie).

ՊԱՅՄԱՆՔ

Խմբագրութեան եկամուտները կը հրատարակուին մասամբ կամ ամբողջութեամբ : Հրատարակուած ու չը հրատարակուած ձեռագիրներն իսկ չեն արուիր : Մանուցման տուր 20 անթ. : Երեքէն աւելի անգամներու համար գատ սակարկութիւն : Մանուցմանը կ'ընդունուին ամէն լեզուաւ :

Ա. ՏՈՐԻ

ԵՐԵՎԱՆԻ 7 ԱՊՐԻԼ 1898

Թիի 8

ԵՒ ՈՉ ԻՍԿ

ԱՄԲԱՏԱՆՈՒԹԻՒՆ

Այն հայը որ կրնայ առաւելագոյն իր անհատական քերթերը լռեցնել, Տիգրան ձգնուորեան կը կոչուի :

Ահաւասիկ այն յիմար ու անտրամաբանական խօսքը, որ իր ամբողջ ծանրութեամբ լուրջ ամբաստանութեան մը հանդամանքն իսկ չունի աննախապաշար մտքերու համար : Իբր բարեկամ թուրքին ինչ որ չը կրցան ընել Արթիններ, Տէր-գառներ եւ այլն, ըսել թէ ձգնուորեան կարող է ընելու, դա կը նշանակէ բացէ բաց մասնակցութիւնը կառավարութեան իբր ոգւորեցիկ ու ամեն կուսակցութիւններու բարեկամ, խօսք հասկցնելու կարող եղական յեղափոխական մը, ինչ որ մէկ հատ իսկ չը կայ ամբողջ հինգ միլիոն հայուն մէջ : Այս յիմար ու աննախապաշար խօսքով հանրային գործերու մէջ մեր տղայ հասակէն ի վեր ունեցած ուղղամտութիւնը կասկածի տակ իսկ չէր ելնար անոնց համար, որոնք մանաւանդ հատի չափ խելք ունէին : Ուր կը մնար դաւաճանի դատաւարութիւնը :

Գաղափարաց ուրիշ շարքի մը մէջ ենթադրենք թէ լրտես մը, դրամաշուրթ մը, կամ ուրիշ մէկ ցած տարարած, որոց թիւ դժբաղդաբար երթալով մեծ համեմատութիւն կ'ստանայ, ելնէր իր խօսքերուն աւելի որոշ շեշտեր տալով, անխղճութեն ըսէր թէ Շաւարշ, կամ Գամբը Արշաիր պատրաստ են այրափ գումարի մը փոխարէն կարեւոր գաղափարներ հաղորդել թուրք կառավարութեան, միթէ մենք իրաւունք ունէինք դատաւարութեան զիրենք մէկէն ի մէկ իբր դաւաճան, առանց մտիկ ընելու կանխաւ իրենց ըսելիքները և կամ առանց տեսնելու վերաբերութիւնը դէպի իրենց վտանգն ու պատիւները, ուրիշ

վերջ պիտի դարձնակոնարար լրագրութեան դատաւարութեան և հանրութեան կամ թուրք և կամ համբոյր :

Փակագծի մէջ խօսելով ճիշդ այն ժամանակ, ուր «Շարժում» լրագրական այս տարրական պարտականութեան դէմ կը մեղանշէ ու ինքզինք արգահատելի վիճակի մը մէջ կը գտնէ, մենք կը հարկադրուինք իրեն գործնական օրինակով մը ցոյց տալ թէ ե՞րբ պէտք է ամբաստանել ու ե՞րբ դատաւարութեան :

Ասկէ չորս ու կէս ամիս առաջ «Մարտ» անուն թերթը կեղծարարները խորագրի ներքեւ կը հրատարակէր ընդարձակ ու պատմական գրութիւն մը, ուր «Շարժում» աշխատակիցներէն միոյն մօտաւոր մէկ անցեալը կը քննադատուէր իբր թիւթիւնի մէջ : Մամբրէի մանրիմ և իբր շատ մը ցած արտաքինութեան հեղինակ :

Այն համար իրերն անծանօթ էին և հետեւեալը ուղարկել պէտք էր Չորս ու կէս ամիս այդ անուրի ամբաստանութեան ներքեւ աքալ ու միեւնոյն ատեն հայուն պաշտօնի կուռքին հետ խաղալ ամեն մարդու գործ չէր : Մեր հիտաւար կ'որձաւ նախքանք այդ սրբաբն, ու այդ սրբաբնութեան քան իր տկարութեան մէջ կը գտնենք գաղափար իբր երկարատեւ լուրսեան, սակայն ամեն ինչ պէտք է վերջ մ'ունենայ. պէտք է իզէ այդ գաղափարական լուրսեանը և եթէ փրկուելու բան մ'է, փրկէ իր պատիւը այն ընթացքով, ինչ ընթացք որ բռնեց ձգնուորեան իրենց դէմ. վտանգի տեղն ու թուականները որոշուած, ամենափոքրիկ պարագաները ճշդուած ԱՆՈՒՆԻ ԱՄԲԱՏԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ ներքեւ կը գտնուի ինք, Շարժումի այդ վարժապետ աշխատակիցը :

Իսկ Դուք, Պարոն Շարժումաւ կաններ, սովորեցէ՛ք թէ ասոր կրսնն ահաւասիկ չնորքով ամբաստանութիւն և սպասեցէ՛ք, որ տեսնէ՛ք թէ ե՞րբ և ի՞նչպէ՞ս կը լինի դատաւարութիւնն ալ :

ՀՐԱԻԷՐ ՄԸ

Այսպէս նեղը մնացած մարդու մը արգահատելի դրութիւնը յիշեցուց մեզ Շարժում երբ ծայրէ ի ծայր հայհոյութեամբ լեցուն, ամեն նապարգ պարտականութեանց սահմաններն իսկ աւելաւոր իր այդ անխելճ յարձակումն ըրաւ մեզ դէմ առանց ուրիշ փոփոխութեան և ապացոյցի :

Ըսաւ թէ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՆԻ և միւս կողմէն դարձաւ ըսաւ թէ չը կրնար հրատարակել : Ըսաւ թէ Տիւնճէն, Քահաբա, Դիտաղը կը շարունակեն իրենց ԱԶԳԱՅԻՆԻ գրութիւնները և միւս կողմէն չը բերաւ մէկ հատ օրինակ այդ գրութիւններէն իր ըսածը հաստատող ու շարունակեց հայհոյել կատարութեան հասած բուն կրթով :

Որովհետեւ ըսի ըստի մօտան շատ հինգեր է և պատգամներու եւ բաների ժամանակը շատնց անցեր, ես կը հրաւիրեմ զՇարժում, որ ժողովուրդի զգացմանը հետ խաղաղացած չը լինելու և քաջութեան մէկ զօրաւոր փորձը ապուր համար նախ հրատարակէ այդ ԽՈՍՏԱՅՈՒՆԻ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՆԻ և յետոյ Տիւնճէն, Քահաբա, Դիտաղի գրութիւններէն ՄԷԿ ՕՐԻՆԱԿ, ՄԷԿ ՆԱՄԱԿԱՍՈՒԹԻՒՆ, ՄԷԿ ԲԱՌՈՒՄԸ ԴԵՆ, որ ԱԶԳԱՅԻՆԻ Հանդամանքն ունեցած ըլլայ : Այն ատեն պիտի հասկնամ թէ քիչ շատ պատուող զգացում ունեցող մարդոց հետ է գործս, եթէ ոչ ժողովուրդն ինք թող վճռէ : . . . այն ժողովուրդը, որ կարգացեր է արդէն Տիւնճէն, Քահաբա և Դիտաղը :

ՊԱՏՃԱՌԸ

Կատակի կարճ ու պատմական կեանքը վերքերով ծածկած էր մեր ցուցամուլ յեղափոխականներու սիրտը : Գաղափարի խիստ պայքարն էր, զոր միջոց Տ. Չաքրը կ'աւելնէր միմեկի ու պէտք է խոստովանել թէ

գէթ պուրկարական գաղափարն մէջ մինչեւ այն օր ոչ ոք համարձակած էր իր լեզուն գործածել : Այդ տարարազը Լեւոն Մարգը, այդ խելճ Ձէյլժուներն չը նայելով իր ցնցոտիներուն, չը նայելով իր քայքայուած առողջութեանը կրցաւ տեսնել ժողովրդական համակիր հոսանք մը, որ մեծ սպառնալիք մ'էր ըստ ինքեան ցուցամուլներու գոյութեանը :

«Տարոս» կը շարունակէր նոյնը աւելի անվախ : «Տարոս» ժողովուրդին և ժողովուրդը Տարոսին կը մօտենային և այս մերձեցումը կը դառնար խորագրան մը անոնց կրունակին, որ յանուն ժողովուրդի ազատութեան կը հարստահարէին ժողովուրդը նոյն իսկ իր կտոր կտոր եղած ու ջախջախուած վիճակին մէջ :

Ուստի «Տարոս» այդ ժողովրդականութիւնը փճացնելու և իրենց նեղ գրութիւնը բարեփոխելու համար պէտք էր անպատճառ (ըստ իրենց) «Տարոս» ի ալ բազկին ձգնուորեանին սեւացրել : Ահա կովկասեան այն ընդհանուր բանաձեւը, որուն մէկ տկար ու անհարակ տրձագանքը տուաւ «Շարժում» իր 14րդ թուոյն մէջ :

Ու միշտ այսպէս եղած է. կովկասցին կը վճռէ, թրքահայը կը գործադրէ : Երեք հարիւր հազար նահատակներու մէջ երեք ուսուհայ Քէյ ալլիներ չը տեսնուեցան, մինչդեռ հազարաւոր կովկասեան տուրքեալ ու ներկայացուցիչներ վրասցին արտասահմանեան հրապարակներու վրայ : Պատիւ Պուրկարիոյ հայութեան, որ իր երեք անձնուրաց ներկայացուցիչներն ունեցաւ արեան դաշտին մէջ :

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ

ԱՄԵՆ ԴԱՍԱԿԱՐԳԻՆ

Ինչպէս գիտէք, խնդիրը յանձնած եմ Դատարանին հաշտութիւնը արդարութեան յաղթանակին մէջ միայն կրնայ կնքուիլ. հակառակ կողմի և թէ զատակա ալ ըլլայ, դա

տարանին սահմանած օրինաց խըստապոյն պատիժը գործող լինել պիտի տամ իր վրայ առանց խնայելու: Գուք համբերող եղէք և հետեւեցէ՛ք խնդրոյն ընթացքին վառ ու առք պահելով ձեր եռանդը: Վասնզի ինէ աւելի դուք պէտք է ճանչնաք ցեցերը, որոնք կը կրծեն զձեզ ձեր մէջ ապրելով: Շատ անճարակ ու շատ սկաւր կը գտնեմ հարուածը բաղդ աստմամբ կուրծքիս, զոր լընձիս հանդարտութիւն զբաւումը Եւ այս պահուս առաւել քան երբեք: Կեցցէ՛ արդարութիւնս:

Տ. ԶԳՆԱԻՌԵԱՆ

ՓՈՔՐԻԿ ՆԱՄԱԿՆԵՐ

Ա.

Կրկին գրել, գրկին քրքրել վէրքերը՝ առ անտանելի մի պարտականութիւն է: Մանաւանդ այժմ, երբ ես կարծում եմ որ հայ ժողովուրդը այնքան է զոռել կարգաւորեց այն տանեակ սուսկի նման բռնաճող ամօթ չը լինի ասել «յեղափոխական» թերթեր որ ես վախում եմ չը լինի ինձ էլ այդ յեղափոխականները հաշէ:

Սակայն իմ բարեկամներից մէկ անցեալներ գրեց ինձ թէ վառնալում հրատարակող մի ինչ որ «Շարժում» թերթ մի մեծ ծառայութիւն է մատուցել նրաւորս: Նա սկսել է հրատարակել հանգուցեալ վարք Պատրիկովի յիշատակարան, որի մէջ մի այդպիսի հրաշակաւոր յեղափոխական, ինձ համար ասել է որ ես ոչ միայն յեղափոխական չեմ, այլ ես յեղափոխութեան կատաղի թշնամի:

Ես չատ եմ ցաւում որ հանգուցեալ վարք Պատրիկով իւր կենդանութեան ժամանակ չը հրատարակեց այդ հոգաւոր յիշատակարանը, որպէսզի կարողանայի յայտնել նրան իմ խորին շնորհակալութիւնս: Թող ընդունին մեծ հերոսի նոյնքան մեծ ժառանգներ այդ իմ շնորհակալութիւնս:

Այս տղեր գրելիս ես չատ բարկացած եմ հայ ժողովրդի վերայ: Այդքան էլ երախտաւոր ժողովուրդ հազիւ թէ գտնուի երկրագնդի երեսին: Գոնեա օտարներից ամենայնք: Մի մարդ մօտ տասն տարիներ յեղափոխականների զըլուխն էր: մի օր, մեծ պարծանք տըխրանալով Հնչակեաններին, յետոյ նոյնքան լուսաւոր աստղ դարձաւ Դաշնակցականութեան, դա այդ Հայոց կարիպալտին վարք-Պատրիկով եւ յանկարծ ամօթ է ասել, ժողովուրդ Հայոց, նա փոխուեցաւ աւելի լաւ աշխարհ եւ դու այդ իմանում ես միայն այն ժամանակ երբ հրատարակուում է նրա յիշատակարանը: Իսկ նա, այդ մեծ հոգին նոյն իսկ մեռնելուց յետոյ քեզ չմոռացաւ:

Ուրեմն մեր բարձրագոյն Պոլսեցի բանաստեղծներ, մի՞թէ այդ Գուրմ-Գափուի հոգեկաւոր հերոսի մահը ձեր քրնարի նուրբ թելեր չը շարժեց... Իսկ նա մասնաւորապէս ձեզ պօլսեցիներից այնքան մեծ բարիքներ արաւ. եթէ դուք այժմ այդ երջանիկ կիանք էք վարում, այդ երջանկութեան մեծ ստեղծողներից մէկն էլ նա էր...:

Է՛հ, ապերախաններ, ապերախաններ: Միշտ դուք այդպէս էք եղել: Ո՛ւր են նրա արժանաւոր ընկերներ, ո՛ւր են Դաշնակցականներ, այն ժամանակ երբ նոցա մեծ յեղափոխականը փոխեց այս աշխարհից: Ինչո՞վ էր նա պակաս Տրապիզոնի հերոսից, ինչո՞վ Գուրմ-

Գափուի քաջագործութիւնը պակաս էր Պահրիին տեսորի ենթարկելուց: Թէեւ երկու գործերն էլ մեծ էին բայց մեծերի մէջ էլ կը լինի համեմատութիւն: Մի՞թէ չի կարելի համեմատել կարիպալտին եւ... տեսնք վաշինգթօնին: Մի՞թէ նոյնքան երջանիկ չեղան Պօլսի հայեր Գուրմ-Գափուի գէպքից յետոյ, որքան Տրապիզոնի հայեր Պահրիի գէպքից յետոյ: Խօսք չը կայ Տրապիզոնի հայեր մի անգամից երջանկութիւն գըտան, իսկ Պօլսին նոյն վիճակին հասնելու համար հարկաւոր էին մի քանի ցոյցեր եւ վերջապէս պանքայի անոռնաւոր գրաւումը: Բայց անկողմնապահ եղէք մեր համեմատութեան երկու հանգուցեալ հերոսներու մէջէ: Գերեզմանի առաջ պէտք է մտանալ կողմնապահութիւն: Եթէ հանգուցեալ վարք-Պատրիկով չը կարողացաւ Պոլիս մի անգամ մից Տրապիզոնի օրին հասցնել, դրա պատճառը նրա ցոնկութեան պակասութեան մէջ չէր, դրանում մեղաւոր էին նախ պոլսեցի հայերը, որոնք զօրադարար Տրապիզոնի հայերից շատ աւելի բազմաթիւ էին եւ յետոյ տաճկաց կառավարութիւն է մեղաւոր, նա կարծում էր այն ինչ որ աղատ կարելի է անել դաւաճանքով, մայրաքաղաքում մի քիչ գծուար կը լինի... Ինչքան չը լինի մայրաքաղաք է, եւրոպացիներ կան...:

Այ, երբ վարք-Պատրիկովի ընկերները շարունակեցին նրա ճանապարհ եւ հասան պանքային, Պոլիսն էլ Տրապիզոնին հասաւ:

Մի խօսքով նա արաց այն ամենը, ինչ որ պահանջում էին նախ Հնչակեաններ եւ վերջիս Դաշնակցականներ... Իսկ նոքա ինքզին յիշատակը կորսուեալ փառնային ենթարկեցին, էլի լաւ էր որ հանգուցեալը ինքնիրեն չը մոռացաւ եւ թողեց իւր անմահ գործերի նկարագրութիւնը: Հայ ժողովրդին է մնում գնահատել այդ ողբալի կորուստ յեղափոխութեան համար...:

Ես առաջարկում եմ հանգուցեալի յիշատակի առաջ աններելի մոռացկոտութեան արգարացնելու համար հետեւեալը: Թո՛ղ Հնչակեաններ եւ Դաշնակցականներ իսկոյն ձեռնարկեն վարք Պատրիկովի յիշատակարանը թարգմանել տաճկերէն եւ քրդերէն: Ահա ինչ հիման վերայ այդ երկու լեզուներով թարգմանել մի բարոյական պարտականութիւն է նրա ընկերների համար:

Այդպիսի մեծ գործերի նկարագրութիւն պէտք է միշտ մնայ ապագայ սերունդի համար իբր աննշան յեղափոխականի անձեռակերտ արձան, իսկ որովհետեւ ես հաւատարացած եմ, որ վարք-Պատրիկովի ընկերները առաջ կը տանին իրենց յեղափոխութիւն նոյն ճանապարհով, ինչ ճանապարհով նա ինքն, ուրեմն էլի մի փոքր ժամանակ հայ անուն կրող ու հայ լեզու խնայողին ճրագով պէտք է փնտռել, հետեւաբար եւ կարգացող չի լինի... Իսկ տաճկերէն եւ քրդերէն: Օ՛, նոքա մի օր դուրս կը գան այս ասիական խաւարից եւ ըստ արժանւոյն կը գնահատեն յեղափոխական վարք-Պատրիկովի եւ իւր նմանների այդ երկու ազգերին մատուցած մեծ ծառայութիւնները...:

Նուրբելով այս տղերք վարք-Պատրիկովի յիշատակին, ես խնդրում եմ նրա ստուերին, որը ինչպէս Համլէդի հայրը դու հանգիստ չէ գտեր եւ ինչպէս ասում է իմ բարեկամ Նօսաքիժն չըջում վառնայի փողոցներում եւ սըրճարաններում, ընդունել այս ինչպէս այն անունը զարմանքի որ ես տաճում եմ զէպի նրա գործունէութիւն եւ մասնաւորապէս իմ անկեղծ շնորհակալութիւնս նրա համար որ նա ինձ դուրս ձգեց իւր գոնեա մահուանից յետոյ իր

նման յեղափոխականների ցանկից...: Թէեւ տաճիկներ եւ քրդեր ապագայում իմ անունս նոյնքան երախտագիտութեամբ չեն յիշեր ինչպէս նրան... բայց ինչ արած ամեն մարդու ձեռքից չի գար այն ինչ որ վարք-Պատրիկովի եւ իւր նմանների...: Միւս անգամ կը դառնամ նրա յիշատակարանի բովանդակութեան:

Լ. Ի. Օ

24 Մարտ 1898

Նէշլէ (Սմերիկա)

Տխար Խմբագիր,

Հաճեցէ՛ք «Տաւրոս»-ի մէջ անկիւն մը շնորհել ներքոյ գրեալ մի քանի տղերքուս:

Ինձ ուղղեալ նամակներ և քարգեր կը հաստատեն թէ վառնախ մէջ անձիս գէմ անհեթեթ լուրեր տարածուել է իբր թէ ես Սմերիկա գալու համար Հրանտ Սիրականեան կոչումը պարունի մը հետ ընկերացած լինելով զինքը Լոնտոն թողած ու Սմերիկա մեկնած ըլլամ:

Ահա իրողութիւնը: Արդարեւ Սմերիկա գալու համար վառնախ ընկերանալու գըժբաղդութիւնը ունեցած եմ յիշեալ պարունի հետ զոր մէկ օրուան ճամբորդութեամբ կարողացայ գիտնալ որպիսի անձի հետ ընկերանալու, և սակայն ընկերիս վարմունքը պատճառ չէին տար ինձ իմ պարտաւորութեանց թելի գտնուելու, ուստի ոչ մի ջանք չեմսկեցի ինձ յանձնուած ընկեր մը ապահովապէս տեղս հասցունելու, զինքը բերելով Լոնտոն որ անմանօթ էր տեղային լեզուին ամէն գիւրութիւններ տուի իրեն, իրաւ է որ դործի մը պատճառաւ քանի մը օր Լոնտոն մնայինք, ուր բարեկամներս անկարելի կը նկատէին ընկերիս Սմերիկա ընդունուիլը, բայց չնայելով այդ աւարկութեանց՝ հակառակ իմ սովորութեանս իր ստակը խնայելու ե զինքը ապահովապէս Սմերիկա բերելու համար՝ վարձեցի յարմարագոյն նաւերէն մէկը, Քանատաի կողմէն Սմերիկա բերելու, ազատելով զինքը Նիւ-Եօրքի խափա հարց ու փորձերէն, փորձելունս նաւահանգիստը ես լինելով Սմերիկեան քաղաքացի, զինքը եղբայրս անուններով ապահով ցամաքը հանցի եւ մի քանի օր հետո պատացունելով փրամիտէնս տարի մինչեւ որ իւր բարեկամը գտայ, նաեւ իրեն յարմար գործ մըն ալ գտայ, որ այժմ գործով կ'ըստղի:

Ահա ընկեր մը որ հակառակ իմ անհուն բարութեանցս իր չար սրտի կասկածները իրողութիւն մը ընելով կը համարձակի իր ընկերով պատաւը արատաւորելու:

Մ. Մ. ՄԱԿԱՐԵԱՆ

ԱՌ ՈՐ ԱՆՆ Է

«Նոյն կերակուրը չուտիք ամեն ժամ, Հիմ է այս առակ:

Ձրսիրուիք բնու ալն գործ, այն օրում որ է խայտառակ:

Գուք աչ ու տեսակ նետէք սուր զամե Մահի խոցելու,

Բայց չուցի կորով ելիլ անգիտե ձակոյլ կուտիլու:

Ամեն ոք կ'ըզնայ ընկ առաւ իր Գործին մէջ փութով,

Բայց մեզի երբէկ սրգար չը բուր Գուել անվերջով:

Կուգէ՛ք որ իրեւ քաջաբաւ տալիս Ըլլա՛ք յայրախան,

Պէտ է ձեզ անգ ընտէ՛ք ապուս վարձապետ Որ օնդէ ճանրան:

Ձեր մօտ կը սեմեմք ծաղիկներ հոս հոն Տեսնով հեօս աղուր,

Գահագրամ, միխակ, օւտան եւ վարդ օճեկեղծ են այլ բոլոր:

Գիտե՛ք ու ցորեկ կ'ողբան անդադար Բիւր հազար մայրի,

Ձեր գլխուն անէծք կը բափեն արգար ՀԱՅ ՈՐԿԱՆՔ, ԱՆՏՏԷ՛ք:

Բայց այս սեւ օրի կ'անցնին անպատեալ Ու կուգայ գարուն,

Եւ դուք կը գտնա՛ք լուսած ու անհա՛ր, «Աւա՛հ ան օրեռուն»,:

ՆԱԼԲԱՆՏ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆԻԷ

(Սնցորդի մը օրագրէն)

1898 Մարտ 3

Պուրկաղ:

Մի՛հ, թշուառութեան, յուսահատութեան ու խժժողի տուտապանքներու տակ ճնշուած ժողովուրդին յոյս մը ցոյց տալու տեղ, Պարոն Դաշնակցականներ, ինչո՞ւ համար անոր աչքերուն առջին սեւ հորիզոն մը կը բանաք: Ո՛չ, փառ՝ անդ կը յաւակնիք պոռաւախօտութիւններով, ստայոյժ լուրերով, Շարաֆներու, Մուսանբուր եւ չեմ գիտեր ինչերու խաբուսիկ յայտնով ժողովուրդը լմնեցնելու աշխատիլ: Գուք այնպէս կը կարծէք թէ այդ բաները շարունակ վառ կը պահեն յեղափոխական ոգին. մինչդեռ իր ներքին վէրքը ծածկող մարդու մը պէս, օր մը փառութիւնները կը հանի, ան ասուն մի՞թէ տնօգուտ չըլլար ամբողջ մերկութիւնը ցուցնել և գարման խնդրել...:

Ինչո՞ւ համար նորակազմ բաժանումի մը գիմելու ստիպուեցան 1890 թուականին. ոչ ապուքէն Նազարէկի բռնապետական Կրապիրն էր պատճառը: Բայց մի՞թէ ազատական ծրագիր մը ստեղծեցիք: Ո՛չ, եթէ առաջինը կեցրոնական տիրապետութիւն մըն էր, եթէ անձնուէր յեղափոխականներն անոր հրամանին տակ գերի մը պէս կը մեռնէին, եթէ ամբողջ ազգը կը ստիպուէր այդ Միապետական գը-

բաժնեման մէջ խզուել . . . եթէ այս բոլոր ճշարտութիւններու համար բաժնեմանը որոշումը տուիք՝ ամեն զոհողութիւններ յանձն առնելով և կողմակերպելու ձեռնարկեցիք Դաշնակցութիւնը, մի՞թէ ձեր նպատակը շատ ազատագրութեան է, մի՞թէ դուք անկախութեան համար պայքարում եք, ինչպէս որ ձեր ծրագրերն Այս, ամեն զոհողութիւնը ընդ, բայց միայն քայքայելու, բաժնեման և ամբողջ ազգը վերածելու երկու ճիւղաւորով ու հակառակորդ կուսակցութիւններու: Եւ չնչկեան կուսակցութիւնը չեմ պաշտպաներ, բայց անկեղծ ճշմարտութիւն մըն է որ չնչկեան ղեկավարներու օրով, յեղափոխական ոգին վառ էր և ազգը կտատարեալ համազօր մնալու ունէր յեղափոխականներու վրայ:

Ձեր ազգակեցրանացումը թէ որ կը նշանակէ հասած տեղը բռնապետութիւն մը հաստատելու սկզբունք մը, եթէ այդպէս է, ուրեմն մեծագոյն չարիքը ձեր մեծագոյն ծրագրերն մէջ է: Ի՞նչ պրոպանդիստներն են, որոնք հարցում Դաշնակցականի մը թէ ո՞ր է ձեր պատասխանատու վարչութիւնը, կը պատասխանէ անվիճելի կերպով մը.

— Մեր ծրագրերն մէջ ատենի բան չի կայ: Ի՞նչ ըսել է կեդրոնական վարչութիւն, ի՞նչ ըսել է կեդրոնը: Մենք ազատութեան համար պայքարում կը լծուինք, ի՞նչպէս կարելի է բռնապետական դրութիւն մը հաստատել:

— Պատասխանատուութիւն մը չունիք . . .

— Այո՛, խիստ պատասխանատուութիւն մը կայ:

— Երբ անհատ մը սխալ գործէ, ո՞վ կը պատժէ զանի:

— Իր գանձած շրջանակին մէջ գործող ժողով մը կայ, ան իրաւունք ունի պատժելու:

Եթէ վստահութեան արժանի չը գտնուի ապա ժողովը:

— Ինչպէ՞ս . . . կարելի՞ բան է:

— Եւ ո՞վ ըստ թէ կարելի չէ: Այսօր անհատ մը իրաւունք ունի կողմակցութեան մը մէջ գտնուելու և անոր ամենապակասն ու անարժանքն մինչև ամենամանր խնդիրներ քննող գործարանին գիւմել: Ո՛չ մէկը կարող է զանի որդի լինել: Հիմա եթէ տեղական կուսակցութեան վստահութիւն չը վայելէր այդ մարդուն քով, ի՞նչպէս պիտի կրնայ ընդունիլ թէ իրեն համար սահմանափակ պատիժը շատ արդարաւոր է:

— Ե՛հ, սակայն ապա պիտի ըլլայ:

— Եւ ատոր կ'ըսեն ազատութիւն:

Ահա կուրորէն հետեւեալութիւն մը: Տեղական կուսակցութեան մը, ըստ ազգակեցրանացումի մը արամազդութեան, կարող է եղբւր և քույր պատժել, — եթէ իր շրջանակին կը վերաբերուի, — կրնայ մէկը ընդունիլ և կամ թէ գործին չեկածը վաճառել ու արտաքսել: Ի՞նչ մը որ

միտպետական կողմակցութեանց օրինադրերն մէջ անգամ գտնուի չը գտնուի: Եւ այս բոլորը մութին մէջ կը կատարուին: Մութին մէջ . . . միշտ մութին մէջ: Բայց ո՞ր տառն տառեր ամենքն ալ պիտի մերկանան: Ճշգրիտ չեմ կարող ըսել, ոտկայն մտաւոր ազատացի մը մէջ կարծեմ ամեն բան երեւան պիտի ելնէ, չնորհիւ իրենց շահատակութիւններուն:

Գործաւորական կեանքս գրեթէ ութ տարին ի վեր քիչ չառ յեղափոխական գաղափարներու մէջ մտնելու: Գեղարժեքայ յայտեր, առնուելու երազներ և հայրենասիրական շնորհներ և ալ ունի: Բայց, առաջ, այսօր տառեր ամենքն ալ յիշեցան և իմ կույճիս տակ, սրտիս է՛ն խորանկ տեղը վերջ մը կ'զգամ որ ամբողջ ազգի վերջին պէս սրբանոտ ու խոցոտած է:

Ասկից ու թմրած տառեր իմ ազգայնական միջոցով, անգամ մըն ալ ժողով հանդիպելու ուղեք, ո՛չ թէ մեր յեղափոխական մարմիններու ի՞նչ ըլլալը տեսնելու, որովհետեւ ամեն բան հասկեր էի, այլ բազմիմաստ ժամանակին զժպիտ քայլերուն հետեւելով: Իրիկուն մը նշանաւոր արձարաններէն մէկուն մէջ ուսայ խումբ մը հայ երիտասարդներ, որոնք հայերէն կը խօսէին: Կամայ մը քաջաւեցայ մէկ անկիւնը ու մըտիկ ըրի:

— Ո՛չ, Սուրբէն, էլի գունդ սխալ ըւմեմ, այդպէս չի լինիր: Պէ՛տք է անապարանք չունիլ, քանի որ ժամանակ ունիք: Խո՛, այդ չունիք:

— Ո՛րք էլ թո՛ղ ապաւենն անք: — Այո՛, այո՛ . . . կրկնեց անգիտէն ուրիշ մը, ի՞նչ կուզեն թո՛ղ ընեն: Միտման հարցը ծանր խնդիր մըն է: Շատով լուծելի չըլլար:

— Մտաւորապէս, ընկերներ, վրայ բերաւ երբեք մը, մի՞թէ կարելի է տառայ այդ շնորհով Արփիարին արտաքսելու, ընդունինք այդ հարցը: Նրանք ամենքն էլ ապականուած մարդիկ են, մենք չենք կարող միանալ նրանց հետ ու ապականուել . . . Այո՛, Եւ Սարգիսը, ա՛խ . . . եթէ տա ինձ, հաստատուե՛ք որ հում հում պատուամ, յոշոտում ու խեղդում եմ . . .

Ո՛հ, այս չարաշուք տեսարանին վրայ երեւցող երիտաւորներու խմբակն՝ որ գարեջուրի սովեղոյն ու փրփրալի գաւաթներու մէջ կայտառ էր և Սարգիսը գաւաթիս, ապա շնորհակալ ձեւեր ունէր. այդ իմ տեսած խմբակը՝ Դաշնակցականներու ղեկավարներէն այն երկու անձերն էին որոնք Պանդրուս մըն ըրով օգը պիտի հանէին . . . եթէ հրաշքով մը կարենային իրենք ազատուիլ ու անգամ մը ժողով նստալ:

Այո՛, ասոնք էին . . . կը խոստովանեմ որ ասոնք էին այնքան հագուարաւոր հայերու արեւան գինը գեղին սովեղներու վերածող և ժողովի

զմայրիկ Սարգիսը մէջ ջուրի պէս ծախսելով օրը օր ընող երիտաւորները: Ասոնք էին, որոնց կամքէն կախած էր Միտման խնդիրը, այն առերեւոյթ զմտկալ Միտմանն՝ որ ուրիշ բան մը պիտի չըլլար. եթէ ո՛չ երկու անակողացած վաճառականներու միտմանէն, իմ մարական արդիւնք մը ապասել:

Ո՛չ, ո՛չ. յեղափոխութիւնը գրչի ծայրը լարուած խողովք մը չէ: Մեր ներկայ դրութիւնը վտանգաւոր է մեզի համար: Գէթ թուեմք չինքնը այն հասանքին գէթ որ օր ըստ օրէ կ'ապաւնայ մեր ամբողջ գոյութիւնը:

ԼԵՌԵՆ 8

ՄԵՐԿՈՒԹԻՆՆԵՐ

Բ.

Սոսիք քիչ մըն ալ Յետադիմականներու վրայ:

Արդ, քանի որ ինչպէս պարզապէս վարժարանի պաշտօնական մարմին չուրջը կը գտնուի, մենք ալ այդ մարմինը տեսարանի մը վրայ բերինք: Արդարեւ քիչ չառ խոհուն, գործունեայ և իրենց արժանիքը բարձր պահող մարդիկ են: Սոր ապացոյցը հեղինական յեղափոխականներու մէջ փնտռելու չէ, այլ՝ իրենց անխնայ աշխատութեան ու հեռաւորութեան մէջ: Միթէ այդ յառաջդիմականները չէին որ ամբողջ տարի մը ձեռնարկեցին ու գործադրեցին ամենէն սոսոր միջոցներ, որպէսզի անոնք հրաժարին, սակայն անօգուտ եղաւ. որովհետեւ լուս գիտէին թէ այդ մութին մէջ գործող մարդիկ ի՞նչ կուզէին:

Բայց . . . գիտէի բա՛ն. այդ իրենց պաշտօնին մէջ խոհուն մտք գործող մարդիկ չէին գիտեր թէ անգիտ Յեղափոխութեան ալ կար, թէ իրենց մէջ իրենց բոլորովին, իրենց քովիկը, վերջապէս իրենց գիտուն վերուը յեղափոխականներ կը վժարային: Ու օր մը չէին գուշակել թէ իրենց գէթ զաւազրութիւններ բարձր մարդիկ, — այդ Յետադիմական կարծածներն ըսել կուզեմ — առանց վայրկեան մը կորանցունելու, իրենց ոսկորին վրայ քարացած նենգութեան սեւ կաշին պիտի ծածկէին ժողովուրդի աչքը շարունակ կարմիր մորթի մը տակ և ազատ համարձակ առաքելի վրայ պիտի նետուէին:

Այդպէս եղաւ Միտման «Առաքեալ մըն եմ» ըսաւ և Դաշնակցութեան ապակեղանացումը մէջսող նետաց. միւսը՝ «Հայրենիքէն վերադարձող Յեղափոխական մընեմ» գրեց և՛ ժողովրդական վաղանցուկ համարանքին խախտութեամբ, պառայ, կանչեց, քաղաքը տակնուվրայ ըրաւ ու մէկ կողմը քաշուեցաւ. իսկ մնացեալներն ալ Պաղը Ալիին ցոյցին վազող ու Պանդի ոսկուց սեմերէն ներս խուժող երիտասարդներու պէս ազգագուտ ձեռնարկութիւն մը կը կարծէին իրենց ըրածը: Միտման մարդիկ, միշտ այդ եղան է Ձեր գիրքը:

Աւելի բացայայտ խօսելու համար պէտք է յիշենք թէ այդ Յետադիմական կողմած տարրը, նաեւ «անանկացած» հոգաբարձութիւնը (Յետադիմական բառերով) բնաւ տարակուսելու պէտք չունէին և չէին կրնար մինչև իսկ մտաբերել թէ Յեղափոխութիւնն այնքան պիտի սոսորանայ որ զայն ֆիզիկական վարժարանին մէջ մտնելու սակա-

ռի, մինչդեռ սխալներ էին. Հացի խնդիրը կար: Մի՞թէ հացի խնդիր ըսելով միայն անհատական ձգտումներով ձեռք բերուած պաշտօն մը պիտի հասկնանք: Ո՛չ, բնականապէս Դաշնակցութեան համար հացի խնդիր էր ամբողջ քաղաք մը ինքարկել, ապակեղանացումի լայն թիւերը բանալ ու «Փառք յաւիտեան առէն» ըսել: Արդ, մէկ բան կը մնար մեր Յետադիմականներուն, գաղանի կերպով մտնելու Դաշնակցութեան կանգնած արձանին, երկիրպագիլ գահն և սիրտերին կրակ, ու հոգիներն խռնկ ընկելով գոյութիւնը . . . ան առեւ, այո՛, ան առեւ միջառած պիտի ըլլային Յետադիմական անունով: Մի՞թէ իրենց . . .

Վարդանանց ցոյցէն երկու օր վերջը կը տեսնուէինք ագիտ ու կարեւոր անձի մը հետ: Հարցուցի իրեն թէ ինչո՞ւ համար անտարբեր կը մնար բոլոր դարձուածքներուն: Հեղինական ժպիտ մը նետեց վրայ:

— Ի՞նչ կրնամ ընել, Պան, պատասխանեց. բոլոր քաղաքը քառ մը դարձեր է: Եթէ կուզես անարգել, նախատուիլ ու բաժանուիլ, մոխր մէջ: Աչքերնուս առնենք է ազգին ու իր եկեղեցիներն մինչև հիմակ ծառայութիւն մատուցանող վաճառական մը, որուն համար գոյ ըսին, գուճանք ըսին, թրքամոլ ըսին, և վերջապէս, ի՞նչ գիտնամ, զրոյարտութիւններ ըրին վրան իր թէ թուրք զիտուորներու համար դրամ հաւաքած է և «Սուրթանի արխանտ սուրբ յաղթական ըլլայ» պողացած է:

— Ես՛ տ լաւ, զրոյարտութիւն ըլլալը քանի որ գիտէք, ինչո՞ւ կարեւորութիւն կուտայ:

— Կը զարմանամ որ անորձ էք և չէք գիտեր թէ մեր ժողովուրդը զեռ շատ հաց պանիրի պէտք ունի որ կարենայ սուսն իրաւէն, զրոյարտութիւնը ճշմարտութեանէն, կեղծ անկեղծէն ու դիմակաւոր հայրենասէրը՝ ճշմարիտ հայրենասէրէն զանազանել: Անիկա չը քննիր այլ կը գաղափարէ: Երեկուտ քեզի համակող մարդը, սոսկալ թընամի մըն է վաղը: Լսածին կը հաւատայ: Դուրս ըսէ անոր որ այսինչ մարդը գաւաճան մըն է. ո՛հ, առանց քննելու այդ բառը կը անգաւորեցնէ. իսկ վաղն ալ հակառակը պնդէ, ան առեւ ալ ես կ'առնէ իր խօսքը: Մանաւանդ չարիքը մեծ է, երբ որ մեր անկողնակալ կարծուած թերթերը կ'անակի վրայ բաց սիւնակներ ունին ատենի պարագաներու մէջ, առանց ճշմարտութեանը տեղեկանալու: Ո՛չ ապաքէն անկողնակալ է. վերջապէս: Այսօր մածունը սեւ է, վաղն ալ ձերմակ: Երեւոքն ալ կ'ըսէ:

— Ըսել է թերթերու մէջ ալ գրուեցաւ. հարցուցի տարօրինակ հետաքրքրութեամբ մը լեցուած:

— Հապա՛, «Իրաւունք» լրագրին քաղաքիս ծանօթ թղթակիցը ծամծմելու նիւթ ըրաւ իրեն:

— Ո՞վ է այդ մարդը:

— Ի՞նչ ըսի՞ս. . . օտար եկեղեցիի գաւակ մը . . . Սակայն տարօրինակ խորապէս մը, խառնակիչ մը, մութին մէջ գործող մը . . . վերջապէս կ'ըսեն թէ Դաշնակցական մըն է: մի՞թէ . . .

— Ի՞նչպէս կըլլայ որ իր դիմակը վար չէք առնիր:

— Ի՞նչ ըսինք, ամբողջ Դաշնակցականներն այս քաղաքին մէջ, լամբային չուրջը դարձող թիթեռներուն պէս, անոր քիչէն կախուած են: Այնքան խեղացի կերպով զարանները չինած է է որ ա՛լ անվար կարող է գործել:

Այս տխուր իրականութիւնը մեր կողմիցինք որ աւելի որոյապէս կարենայինք նայիլ հիմա այն տեսարանին

